

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/7

25 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արմինե Միսկարյանի 28.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 14.07.2014 թ-ի թիվ 242 որոշման դեմ:

Ա/Ձ Արմինե Միսկարյանի գանգատում բերված փաստարկները.

Ըստ գանգատի, Ա/Ձ Արմինե Միսկարյանը (այսուհետ նաև գանգատաբեր) 1990 թ-ից աշխատում է որպես ուսուցչուհի և իր աշխատավարձից գանձվում են պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Նշված աշխատանքին զուգահեռ 17.12.2001 թ-ին Նոյեմբերյանի պետական ռեգիստրում 5 տարի ժամկետով՝ մինչև 01.01.2007 թ-ը, գանգատաբերը գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր, հաշվառվել հարկային տեսչությունում և զբաղվել է մանրածախ առևտրով՝ ժամանակին կատարելով բոլոր պարտավորությունները: Այնուհետև, չկարողանալով համատեղել հիմնական աշխատանքի հետ 10.10.2003 թ-ից իր դիմումի համաձայն անորոշ ժամկետով դադարեցրել է անհատ ձեռներեցի գործունեությունը, սակայն դադարեցման դիմում-հայտարարության հետ չեն պահանջել ներկայացնել պետական ռեգիստրի գրանցման վկայականը:

11.11.2005 թ-ին ընդունվել է «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքը, որի 2-րդ հոդվածի համաձայն անհատ ձեռնարկատերերը ազատվել են 2003-2005 թ.թ. համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերից: Նույն օրենքի համաձայն հարկային տեսչությունները մինչև 2006 թ. սեպտեմբերի 1-ը պետք է գանգատաբերի անունը մտցնեին ցուցակների մեջ և ներկայացնեին պետական ռեգիստր՝ պետական գրանցամատյանում գործունեության դադարեցման կամ լուծարման մասին գրառում կատարելու համար:

10.10.2003 թ-ից, այն է՝ գործունեությունը դադարեցնելուց հետո մինչև 18.07.2014 թ-ը հարկային տեսչությունից չկատարված պարտավորությունների վերաբերյալ որևէ ծանուցում չի ստացվել: Միայն 18.07.2014 թ-ին փոստով ստացվել է Իջևանի ՏՀՏ թիվ 242 որոշումը՝ 377.150 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ, որի հետ գանգատաբերը համաձայն չէ:

29.07.2014 թ-ին Իջևանի ՏՀՏ պետին ներկայացվել է դիմում-բողոք թիվ 242 որոշումը չեղյալ համարելու վերաբերյալ: Դիմում-բողոքը գրանցվել է Իջևանի ՏՀՏ գրանցամատյանում, սակայն մինչև օրս դիմումի վերաբերյալ որևէ պատասխան չի ստացվել:

Իջևանի ՏՀՏ պետի թիվ 242 որոշումը ենթակա է չեղյալ համարման, քանի որ 10.10.2003 թ-ից անորոշ ժամանակով դադարեցվել է գործունեությունը, ինչպես նաև հաշվի առնելով, որ անհատ ձեռնարկատերի վկայականի ժամկետը սահմանված է եղել մինչև 01.01.2007 թ-ը:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել Իջևանի ՏՀՏ պետի 14.07.2014 թ-ի թիվ 242 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Արմինե Միսկարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 14.07.2014 թ-ին ընդունել է թիվ 242 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 30.06.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Արմինե Միսկարյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 377.150 դրամ, որից սոցիալական ապահովության վճարի ապառք 240.000 դրամ, տույժ 131.429 դրամ, ընդամենը՝ 371.429 դրամ, հաստատագրված վճարի տույժ 1.462 դրամ, եկամտահարկի ապառք 2.693 դրամ, տույժ 1.567 դրամ, ընդամենը՝ 4.260 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ պետական ռեզիստրի կողմից 17.12.2001 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա069752 վկայականի համաձայն, քաղաքացի Արմինե Միսկարյանը գրանցված է ՀՀ պետական ռեզիստրում որպես անհատ ձեռներեց 17.12.2001 թ-ից: Ընդ որում, անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա069752 վկայականում նշված է, որ վկայականը ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերոգրյալ վկայականի 17.12.2001 թ-ի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/Ձ Արմինե Միսկարյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 01.01.2007 թ-ը:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա069752 վկայականում, ինչպես նաև վկայականի թիվ 01 ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Արմինե Միսկարյանը 01.01.2007 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, դադարել են Արմինե Միսկարյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Արմինե Միսկարյանի նկատմամբ 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ, ըստ էության, չեն կարող հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է Որոշմամբ եկամտահարկի և հաստատագրված վճարի գծով գանձման առաջադրված պարտավորություններին, ապա հաշվի առնելով, որ նշված գումարներն առաջացել են մինչև 01.01.2007 թ-ն ընկած ժամանակահատվածում Ա/Ձ Արմինե Միսկարյանի ներկայացված հաշվետվություններով, դրանք վերջինիս կողմից ենթակա են վճարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Իջևանի ՏՀՏ պետի 14.07.2014 թ-ի թիվ 242 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններից նվազեցնել ընդամենը 371.429 դրամ:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՍԻՐՈՒՄՅԱՆ

